


Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ՀՈՂՄԻ ԱՍՏԾՈՒ ԲՆՈՐՐԱՆԸ

Հնդեվրոպական-շումերական առասպելաբանական փոխառնչությունների պարզաբանման հարցերում առանձնահատուկ դեր է վերապահված Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհին: Այստեղ էին այն երեք լեռնաշղթաներն ու չորս գետերի վերին հոսանքները, որոնք, ըստ «Աշխարհացոյց»-ի հեղինակի¹, գտնվում էին Երկրագնդի ամենաբարձր մասում՝ «Կատար Երկրի»-ում: Բարձր Հայքի նկարագրության մեջ «Աշխարհացոյց»-ում կարդում ենք հետևյալը. «Եւ ըստ անուանդ արդարեւ բարձր է ոչ միայն քան [զմնացեալ] Հայք, այլ քան զամենայն Երկիր, վասն որոյ Կատար Երկրի կոչեցին զնա, զի ի չորս կողմ աշխարհի ջուր արձակէ՝ զի բոլիւ չորս գետս զօրեղս, զԵփրատ՝ յարեւմուտս, եւ զԵրասխ՝ յարեւելս, զԳայլ՝ ի հարաւ, զԱկամսիս որ է Վոհ՝ ի հիւսիս: Ունի լերինս մեծս երիս ... եւ քաղաք զԹեոդուպաւլիս»:² Վերջինը Կարին քաղաքի բյուզանդական անունն է:³ Հիշատակված չորս գետերից Եփրատը իր ստորին հոսանքով արդեն շումերական գետ էր՝ շումերների գերագույն աստված Էնլիլի որդու՝ Էնկիի (Էյա, Հայա) սրբազան գույգ գետերից մեկը (մյուսը Տիգրիսն էր):⁴

«Կատար Երկրի»-ի երեք լեռների առթիվ էլ առայժմ հիշենք միայն Էնլիլի Kur.gal «Մեծ լեռ» մակդիրը: Բանն այն է, որ շումերերեն Kur «լեռ, լեռնային երկիր, երկիր» բառի աքաղական համապատասխան սեպախումբը բաղկացած է երեք սեպերից՝ գաղափարագիր ŠADŪ (šadû «լեռ») ընթերցմամբ:⁵ Այն ծագում է շումերերենում kur ընթերցվող սեպախմբից, որի հիմքում երեք նշաններից բաղկացած հետևյալ մեհենագիրն է՝  (վերջինս արձանագրված է դեռևս մ.թ.ա. 3500-3100թթ. թվագրվող Ուրուկ-IV հնագիտական շերտում):⁶ Երեք լեռներ պատկերող այս մեհենագիրը հիշեցնում է «Կատար Երկրի»-ի երեք *մեծ լեռները* և նրանց շրջակայքն ընդհանրապես:⁷ Ըստ այսմ է հասկանալի դառնում, թե ինչպես կարող էր շումերերեն kur բառը և՛ «լեռ» և՛ «երկիր» նշանակել:

Հնդեվրոպական նախալեզվում «լեռ» նշանակած արմատներից մեկը *Hk^oer/*Hk^oor ձևով վերականգնած Վ.Վ. Իվանովը ցույց է տվել նաև նրա հնարա-

¹ Հոդվածի անգլերեն տարբերակը՝ տեղ է գտել էլեկտրոնային պարբերականում (տե՛ս <http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/209.pdf>):

² Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 106:

³ Նույն տեղում, էջ 58, 106,

⁴ Афанасьева В. Энки, “Мифы народов мира” (այսուհետև՝ МНМ), т. II, М., 1988, стр 662.

⁵ Khazai Khosro, Les grandes étapes de l'archéologie mesopotamienne, “De Sumer à Babylone. Collections du Louvre” (այսուհետև՝ Khazai Khosro), Bruxelles, 1983, p. 24.

⁶ Նույն տեղում, էջ 21, 24.

⁷ Օրինակ, իտալական սեպագիր արձանագրություններում որևէ լեռնանվան տակ հասկացվում է նաև անվանակիր լեռն ընդգրկած երկիրը (Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, Եր., 2013, էջ 63):

վոր առնչությունը շումերերեն *kur* բառին:⁸ Այս նոր վերակազմության *k'-ով ձևերը համապատասխանում են հնդեվրոպական հնչյունական համակարգի ընդունված նախորդ վերակազմության *gy-ով և հին վերակազմության *g²-ով ձևերին: Մատնանշված արմատից են ծագում հուն. *δειρος* «բլուր», հին հնդկ. *giri-*, ավեստ. *gairi* «լեռ» հին սլավ. *gora* «լեռ» և այլն:⁹ Այդ նույն արմատին է հանգում հայերենի չստուգաբանված *կռան* «տան կտուր, տանիք» բառը:¹⁰ *կռան* <*կռո-աւ-ն (-աւ վերջածանցի համար հմմտ. *աղ-աւ-աղ, իր-աւ, խարդ-աւ-անք, սակ-աւ*¹¹ և այլն, իսկ վերջնաձայն *ն*-ի համար՝ *դուռն, ձեռն, ոտն, սիսեռն, քիրտն* և այլն):¹² Ի նկատի առնելով հին ժողովուրդների առասպելաբանական պատկերացումներին բնորոշ մարդու մարմնամասերի և աշխարհագրական առարկաների համադրումները՝ կարելի է նույն *կռո արմատից ծագած համարել նաև *կռուն*/*կռո* «կոնակ, մեջք, թիկունք», «թևի և ուսի կպած տեղը», բրբ. «կոնք, մեջքի մեծ ոսկորը»¹³ և *կռթունք* (<*կռո-թ-թ աճականով) «կոնակ, թիկունք», որից՝ *կռթնիլ* «հենվել» հավաստի ստուգաբանություն չունեցող բառերը:¹⁴ Համադրումների համար հմմտ. անգլ. *back* «մեջք» և «բլրի գագաթ», *spine* «ողնաշար» և «լեռան կատար»,¹⁵ ռուս. *хребет* «մեջք, կոնակ, ուս» և «լեռնաշղթա», որից՝ *хребтовыѣ* «ողնաշարի» և «լեռնաշղթայի»:¹⁶

Ամենայն հավանականությամբ, Բարձր Հայքին առնչված *կռո «լեռ» արմատից է ծագում նաև *կռո* (<կռո-ո) բառը: Այս վերջինի վերաբերյալ Մտ. Մալխասյանցը նշել է, որ այն տալիս են Արևելյան Հայաստանում բնակվող հայերը՝ Արևմտյան Հայաստանից տեղափոխված հայերին՝ առանձնապես ախալցխացիներին, ախալքալաքցիներին, շիրակցիներին:¹⁷ Հայտնի է, որ Ախալցխայում և շրջակայքում, Ջավախքում ու Շիրակում 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո վերաբնակված հայերի մեծ մասը Բարձր Հայքից էր և նրանց է վերաբերում *կռո* անունը: Անշուշտ, այդ անունը վերաբնակիչներն ու նրանց ուղղակի նախնիները կրել են դեռևս իրենց բնորրանում: Հոգուտ դրա կարող է վկայել նաև *բարդու* անունը, որը ըստ միջնադարյան «Բառագիրք հայոց»-ի, նշանակում է «կարնեցի»¹⁸ (հնում *Կարին*¹⁹ կոչվում էր ոչ թե գավառի կենտրոնատեղին՝ ներկա-

⁸ Гамкрелидзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ *ИЯИ*), т. II, Тб., 1984, стр. 665, пр. 1.

⁹ Նույն տեղում, էջ 666:

¹⁰ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ *ՀԱԲ*), հ. II, Եր., 1973, էջ 669:

¹¹ Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Եր., 1975, էջ 85-86:

¹² Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 74:

¹³ *ՀԱԲ*, հ. II, էջ 663-664:

¹⁴ Նույն տեղում, էջ 669:

¹⁵ *Англо-русский словарь, составил В.К. Мюллер, М., 1964, стр. 76, 949.*

¹⁶ Ռուս-հայերեն բառարան. չորս հատորով, հ. IV, Եր., 1958, էջ 637:

¹⁷ Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ *ՀԲԲ*), հ. II, Եր., 1944, էջ 494: Հովհ. Թումանյանի պատմվածքներից մեկում լոռեցի Անդրին ուղևորվել էր Շիրակ, երբ կեսձանապարհին «... աղբյուրի մոտ տեսավ մի սպիտակ չուխավոր մարդ: Անդրին իսկույն ձանաչեց, որ նա կռո է (շորագլայցի). միայն նրանք են սպիտակ չուխա հագնում» (Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. V, Եր., 1994, էջ 9):

¹⁸ *Բառագիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամայանի, Եր., 1975, էջ 51:*

յիս էրզրումը, այլ հենց գավառը):²⁰ *Բարդու<բարդ-ու*. հմմտ. *թթու, լորտու, կծու, խորովու* և այլն, որոնք կազմված են *-ու* վերջածանցով, իսկ **բարդ* արմատը *բարձ-ի* տարբերակն է՝ առկա ինչպես *Բարձր Հայք* երկրանվան մեջ, այնպես էլ *բարձունք* և այլ բառերում: Դրանց համարժեքության տեսանկյունից հմմտ. *զինդ/զինձ, խանդ/խանձ, խեղդ/հեղձ, փոխինդ/փոխինձ* արմատակից գույզերը: Հիշենք նաև *բարդի* (<*բարդ-ի) «մի տեսակ բարձր ծառ», *բերդ* «բերդ, ամրոց» բառերը²¹ և վերջինիս *բերձ* տարբերակը (հմմտ. *բարձաբերձ, երկնաբերձ*՝ «բարձր, բարձր տեղ» նախնական իմաստներով):

Էնլիլը ոչ միայն Kur.gal «Մեծ լեռ» էր կոչվում, այլև կացարան ուներ երկիրն ու երկինքը միավորող բարձր լեռը, իսկ նրա տաճարը Նիպպուրում կրում էր E.kur «լեռան տուն» անունը:²² Սրանցով Էնլիլի նախատիպ լեռան անձնավորում աստվածությունը, Էնլիլի խորհրդանիշը՝ բազինին դրված եղջերավոր խույրը, և Էնլիլն ինքը՝ որպես հողմի անձնավորում աստվածությունն առնչվում են Բարձր Հայքին//«Կատար Երկրի» և սրա հյուսիսային սահմանը կազմած Պարխար//Արևելապոնտական լեռնաշղթային,²³ որի հայկական անունն էր կրում *Պարխար, Պարխարցի, Պարխրցի* կոչված հյուսիսային քամին: Այս քամու անունը, ինչպես Հ. Աճառյանն է բացատրում. «առաջին անգամ ծնունդ է առած Փոքր Հայքի և Արևմտյան Հայաստանի շրջաններում (Շատ սովորական երևույթ է քամիները կոչել փչած տեղերի անունով)»: ²⁴ Իսկ Միջագետքի հնաբնակները Էնլիլին իրենց օրհներգերում և աղոթքներում համեմատում էին ինչպես շառաչող ու ավերիչ քամու հետ, և նրան կոչում էին «քամու լեռ», այնպես էլ վայրի ցուլի հետ:²⁵ Եթե սրանց հետ միասին ի նկատի ենք առնում, որ նրա խորհրդանիշը եղջերավոր խույրն էր, և նա «մեծ լեռ»(Kur.gal) էր կոչվում, ապա հասկանալի է դառնում, որ դրանք բոլորը փոխադարձ իմաստաբանական կապի մեջ էին՝ պայմանավորված բարձր լեռան պաշտամունքով ընդհանրապես և «Կատար երկրի»-ի (Բարձր Հայքի) լեռնաշղթաներից մեկի՝ հյուսիսային քամու օրրան Պարխարի դիրքով՝ մասնավորապես:

Քաջ հայտնի է լեռների և եղջերավոր վայրի կենդանիների առասպելաբանական գուգորդման փաստը՝ իր արտացոլումը գտած Հայոց այնպիսի լեռնանուններում, ինչպիսիք են՝ *Արագած, Արտին, Արտու, Առնու, Սրմանց, Ցլու գլուխ* և այլն: Արևելապոնտական լեռնաշղթայի *Պարխար* անունը ևս սրանց շարքում է: *Պարխար<Պարխ-ար* լեռնանվան հիմքը նույնն է *պախրայ/պախրէ* բառի *պախր* հիմքի հետ: *Պարխ-ը* և *պախր-ը* մեկի մյուսի դրափոխության ենթարկված ձևն է

¹⁹ Կարին<*Կար-ին արմատի համար հմմտ. *Կարկառ, իսկ վերջածանցի համար լուսին, դարբին, կարգին, խորին* և այլն:

²⁰ *Καρχηνίτις* (Strabo, XI, 14,5, Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, Եր., 1940, էջ 56-57):

²¹ ՀԱԲ, հ. I Եր., 1971, էջ 413-414, 427-428:

²² Khazai Khosro, նշվ. աշխ., էջ 45, Афанасьева В., Энциклопедия, «МНМ», т. II, стр. 662-663.

²³ Պետրոսյան Ս., Հայկական լեռնաշխարհի տեղը Էնլիլ և Էնկի աստվածների պաշտամունքում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային ութերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 22-24 հոկտեմբերի, 2010, Եր., 2010, էջ 58-65:

²⁴ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 62:

²⁵ Токарев С., Религия в истории народов мира, М., 1986, стр. 322; Афанасьева В., Энциклопедия, «Мифология. Золотой фонд. Энциклопедия» (այսուհետև՝ *МЗЭ*), М., 2003, стр. 635.

(բայց ո՞րը որի): *Պախրայ/պախրէ* նշանակում է «տավար, արջառ, նախիր», իսկ բարբառներում նաև՝ «եզ», «եղջերու», «այծյամ, կխտար (արու կամ էզ)»: ²⁶ Պարխար//Արևելապոնտական լեռնաշղթայի արևելյան հատվածը նույնաբնույթ անունով էր հայտնի փոքրասիական հույներին ևս: Ստրաբոնն այն կոչում է *Μοσχικα*՝²⁷ «Մոսքիկյան լեռ», իսկ «Աշխարհացոյց»-ը՝ *Մոսքական լեռինք*:²⁸ Լեռնանվան հիմքը նույնական է հուն. *μόσχος* «ցլիկ, հորթուկ, մոզի, երինջ» բառի արմատի հետ:²⁹ *Պարխար* լեռնանվան արմատակից լեռնանուն կար նաև ավելի հարավ ընկած տարածքում: Այդ արմատական ձևն էր պահել *Պախր*, *Պախրայ* կոչված լեռը:³⁰ *Պարխար* լեռնանունը իրանական **parahvāθra* ենթադրյալ ձևից առաջացած լինել չէր կարող այն պարզ պատճառով, որ ավեստյան համապատասխան *pouruxvāθra*-ն նշանակում է «լի բարօրությանմբ»,³¹ երբ Պարխարցին հյուսիսային ցրտաշունչ քամին է, իսկ Պարխար լեռնաշղթան համարվել է նրա օջախը: Ներսես Շնորհալին բերում է «Պարխար» պատասխանն ակնկալող հետևյալ հանելուկը.

«Ի հիւսիսոյ գայ ձիաւոր,
Հանց սուր երթայ զինչ թելաւոր,
Զփիճիքս առնէ կոտոր-կոտոր
Խայթէ զմարդոյն աչքն զեղ կոր»:³²

Հանելուկում առկա են առասպելաբանական մտածողության արդյունք պատկերավորման ձևեր և անագրամաներ, որոնք բնորոշ չեն այն ավանդած Ներսես Շնորհալու դարաշրջանի հայի լեզվամտածողությանը: Հայտնի է, որ հնդեվրոպական առանձին ժողովուրդներ պահպանել են հնդեվրոպական փոքրածավալ չափածո տեքստերին բնորոշ մի սկզբունք՝ հասցեատեր առասպելաբանական կերպարի անվան անագրամաներով սքողման սկզբունքը: Նրա անունը բացահայտվում էր «բանալի» բառի միջոցով, որը կազմված էր լինում գաղտնի անվան հնչյունները կրկնող այլ բառից կամ բառերից:³³ Լավագույն օրինակներից մեկը հանդիպում է Վահագն աստծուն ձուլված օրհներգում՝ «Վահագնի երգ»-ում: Այստեղ երիցս հնչում է *արեւ* բառը հիշեցնող *էր-եւ* «բանալի»-ն՝ կազմված *եւ* շաղկապից ու նրան նախորդող բայի *-էր* վերջավորությունից:³⁴

Բերված հանելուկում այս տեսանկյունից ուշագրավ են *զփիճիքս առնէ* բառակապակցության և *կոր* բառի ստեղծած հնչյունական դաշտերը: Մրանցից առա-

²⁶ ՀԱԲ, հ. IV, էջ 7, ՀԲԲ, հ. IV, Եր., 1945, էջ 36:

²⁷ Strabo, XI, 2, 15; XI, 12, 4; XI, 14, 1; XII, 3, 18 (Ստրաբոն, էջ 26-27, 42-43, 52-53, 74-75):

²⁸ Երեւմյան Ս., նշվ. աշխ., էջ 100: Արքահամյան Ս., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 347:

²⁹ Պետրոսյան Ս., Դրախտի զետերի և Խավիլա, Քուշ երկրների տեղադրության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 2006, թիվ 2, էջ 237-255:

³⁰ Երեւմյան Ս., նշվ. աշխ., էջ 76, 99:

³¹ ՀԱԲ, հ. IV, էջ 62:

³² Մնացականյան Ս., Հայ միջնադարյան հանելուկներ, Եր., 1980, էջ 261:

³³ Де Соссюр Ф., Труды по языкознанию, М., 1977, стр. 635-649.

³⁴ Պետրոսյան Ս., «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, թիվ 4, էջ 78-79:

ջինը՝ *(գլխիճիք)u-առնէ*, հուշում է, որ խոսքը հյուսիսային սառը քամու մասին է՝ *u-առնէ/սառն է*, իսկ *կոր* բառն ունկնդրին ուղղորդում է դեպի **կուր/*կուռ* բառը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե գործ ունենք *կոր* «կարիճ» բառի հետ, բայց կարիճը գետնաքարշ անթև միջատ է, և մարդու աչքը, այն էլ *թևավոր* սրի նման խայթել չի կարող: Իսկ դա կարող է անել կուրը (ըստ Ղ.Ալիշանի՝ «մի տեսակ վնասակար միջատ» է), իսկ *կուր*-ը տարբեր է *կոր* «կարիճ» բառից:³⁵ Ըստ այսմ, հանելուկի նախնական օրինակում *կոր*-ի փոխարեն լինելու էր **կուր*, որն արմատն է *կրէտ* (<*կուր-էտ) «իշամեղու» բառի, իսկ սա հնչյունական նմանակն է **կուր* «լեռ» բառի: Ուշագրավ է, որ եթե հյուսիսային Պարսաք լեռնաշղթայի անունով հյուսիսային սառը քամին *Պարխար* է կոչվել, ապա նույնպիսի մոտեցում հյուսիսային քամու նկատմամբ դրսևորած հին հույները այն Βορέης, իսկ արևելյան սլավոնները Вора, Ворѣя, այսինքն՝ «լեռ, լեռնային» են անվանել:³⁶ Այս բառերը հնդեվրոպական նախալեզվից եկած արմատակիցներն են մեր «*կուր/*կուռ «լեռ» բառի:

Էնլիլը ոչ միայն Kur.gal «Մեծ լեռ» էր կոչվում, այլև նույնացվում էր շառաչող և ավերիչ քամու հետ: «Լեռ»/«եղջերավոր»/«քամի» իմաստաբանական կապի առնչությամբ պետք է հիշել, որ «Ամպեղեն էակը, որ որոտն է, մտածվում է որպես արջառ կամ *մեծ եղջյուրներով լեռնանման էակ...*, բայց որոտացողը մտածվում է նաև *որպես հողմ*, քանզի հավատում են, թե որոտում է, երբ ալեկոծող *հողմը փչում է* երկնային ծովի մեջ»³⁷ (ընդգծումներն իմն են-Ս.Պ.): Մ. Աբեղյանի այս դիտողության հաստատումներն ենք գտնում «Եթե մալը փոշտա թիփի կլինի»³⁸ հավատալիքի մեջ և հին հուն. αἰγίς բառում, որով էին կոչվում թե՛ այծենին ու այծենակաճը, թե՛ մրրիկն ու փոթորիկը, թե՛ ամպրոպային Ջևսի վահանը:³⁹ Էնլիլի կերպարում ամպրոպային գծերի բացակայությունը լինելու է հետևանքը նոր միջավայրի՝ տափարակ և գրեթե ամպրոպագուրկ Շումերի ուղղակի ազդեցության: Որ հնդեվրոպական ցեղերի հողմի անձնավորում աստվածությունների բնակավայրը նախապես համարվել է Արևելապոնտական լեռնաշղթան, ցույց է տալիս ամագոնների հայրենիքի վաղ տեղորոշումը: Ամագոններին հույներն համարում էին հողմի ռազմիկ աստված Արեսի դուստրերը, որոնք ժառանգել էին նրա բնավորության գծերը: Օրինակ՝ «կատաղի հողմի պես» մարտնչում էր ի վերջո Աքիլեսից սպանված Պենթեսիլիան,⁴⁰ իսկ մեկ ուրիշ հույն հերոս Թեսեսը, հաղթել և գերի էր վերցրել ամագոնների մեկ ուրիշ թագուհու՝ Անտիոպեին:⁴¹ Վերջին դեպքի առթիվ հիշատակված է նաև ամագոնների Թեմիսկյուրե քաղաքը և Թերմոդոն գետը: Մրանցից առաջինը Սև ծովի հարավային ափի ներկայիս Թերմե բնակավայրն է,⁴²

³⁵ ՀԱԲ, հ. II, էջ 665:

³⁶ ИЯИ, т. II, стр. 678-679.

³⁷ Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. VII, էջ 66:

³⁸ Լալայան Ե., Երկեր, հ. I, Եր., 1983, էջ 247:

³⁹ «Древнегреческо-русский словарь», т. I, М., 1958, стр. 47.

⁴⁰ Тахо-Годи А., Амазонки, МЗЭ, стр. 35; Կուն Ն., Հին Հունաստանի լեզվերը ու արասպելները, Եր., 1956, էջ 478:

⁴¹ Նույն տեղում, էջ 277:

⁴² Երեմյան Մ., նշվ. աշխ., էջ 53:

իսկ երկրորդը՝ այս բնակավայրի մոտ Սև ծովը թափվող գետակը:⁴³ Վերջինս սկսվում է Արևելապոնտական լեռնաշղթայի արևմտյան մասում՝ նրա հյուսիսային լանջերից: Ուրեմն, հին հույները նախապես Պարխար Արևելապոնտական լեռնաշղթայի և Սև ծովի միջև էին պատկերացնում հողմածին ամագոնների երկիրը:

Շումերների գերագույն աստվածը իր Enlil անվամբ ևս բացահայտում է ինչպես իր հողմային բնույթը, այնպես էլ նախատիպ աստվածության (կամ նախատիպերից գլխավորի) Հայկական լեռնաշխարհում՝ հնդեվրոպական նախահայրենիքում ձևավորված լինելու հանգամանքը: Enlil<En-lil քաղաքիչներից բաղկացած դիցանվան en- քաղաքիչը շումերերենում «տեր» է նշանակում (նախապես հոգևոր իմաստով՝ որպես՝ «գերագույն քուրմ»),⁴⁴ իսկ -lil-ը մոտավոր թարգմանությամբ՝ «փյուն, քամի, օդ»: Այս դեպքում դիցանվան մոտավոր իմաստը լինում է «տեր փյուն», «տեր քամի», «տեր օդ»:⁴⁵ En-lil դիցանվան lil քաղաքիչի իմաստի մեջ կարելի է հստակություն մտցնել՝ ի նկատի առնելով նրա հետ հնչյունական տեսանկյունից նույնական հնդեվրոպական նախալեզվի *lel-/*lēl- «շարժել, ցնցել» արմատը, որով կարելի էր արտահայտել քամու (օդի տատանման) տեսանելի հետևանքները և նրան համարել «շարժող, տատանող»: Հնդեվրոպական այս արմատի առաջին տարբերակից հայերենում ունենք լել բառը, իսկ երկրորդ տարբերակից՝ լիլ (որից *լիլ-ուկ<լլուկ): Գրաբարում արմատն ավանդված է երկրորդական նշանակությամբ՝ լլուկ «նեղություն, չարչարանք», որից՝ լլկել «չարչարել, նեղել», լլկիչ «չարչարող» և այլն, բայց բարբառները պահել են արմատի նախնական նշանակությունը: Հմմտ. լելալ «շարժվել, երերալ», լլկալ, լլկվիլ «շարժվել, երերալ, այսուայնկողմ ընկնել» (Վան), լլգել «ցնցել, թափահարել» (Ալաշկերտ), լլգել «մանկանն օրորել», «քնած մարդուն ցնցել ու շարժել՝ որպեսզի արթնանա» (Մուշ), լլգիլ (Խարբերդ), լիլիկել (Մարաղա), «օրորել մանկանն օրրանում» և այլն, իսկ ազգակից լեզուների արմատակից բառերից՝ հին հնդկ. lelayati «ճռճվել, տատանվել, դողալ», lālayati «զգվել, փայփայել», լիսվ. leliúoti «օրորել, ճռճել», լատիշ. leluđt «օրորոցի մեջ մանկան օրորել, նանիկ ասել» և այլն⁴⁶: Այս վերջին նշանակությամբ պարզվում է նաև քամու դրական դերը, որն ունեցել է որք նորածինների կյանքում որպես նրանց օրորողի և օրոր ասողի: Այդպիսի դերով է նա հանդես գալիս հայ ժողովրդական մի շարք հեքիաթներում: Դրանցից մեկում նորածին որբուկին հայտնաբերած պառավը «Կը վերցու գերեխեն կը բերե, էրկու ծառից ճղոր մե կը կապե, կը դնե մեջ կորորե.

Օրո՛ր, օրո՛ր, անուշ գառնուկ.
Օրոր էնիմ օրորոցին

Հարաֆ քամին տանե բերե
Վերու էժ գա քրզի ծիծ տա

⁴³ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 53, քարտեզ:

⁴⁴ Дьяконов И. Города-государства Шумера, "История древнего мира, I, Ранняя Древность", М., 1989, стр. 64.

⁴⁵ Նույն տեղում, էջ 113; Афанасьева, Эллиль, МЗЭ, стр. 635.

⁴⁶ ЗУС, h. II, էջ 288, ЗСР, h. II, էջ 192, 198:

Մեկիկ աստված քրզի պահե»:⁴⁷

Այս և ժողովրդական այլ հեքիաթներում որբուկի փրկիչ-հովանավորի դերում հանդես եկող պատավր, վայրի այծը (այծյամ, եղնիկ), քամին արդյոք խորհրդանիշերն ու տարբեր դրսևորումները չե՞ն Մայր դիցուհու: Հարցի դրական պատասխանի դեպքում կարող ենք բացահայտել հնդեվրոպական-շումերական մեկ ուրիշ գուգահեռ ևս: Էնլիլի կինը, որին համարում են մայր դիցուհու դրսևորումներից մեկի հետագա առանձնացումը, կոչվում էր Նինլիլ: Շումերերենում En.lil և Nin.lil դիցանունները գուգահեռ՝ արական (en) և իգական (nin), ձևակերպումներն են *lil արմատի, որը հիմք է տվել Nin.lil դիցանունը հասկանալու որպես «տիրուհի քամի»:⁴⁸ Նինլիլը Էնլիլի խորհրդատուն էր, օգնականը, իր սահեղ ամուսնու գայրույթը մեղմող գթառատ դիցուհի:⁴⁹ Եթե հիշենք Էնլիլի խորհրդանիշ եղջերավոր խույրը և եղջերավոր կենդանիների հետ նրա բացահայտվող առնչությունները, ապա պարզ կդառնա, թե ինչու Նինլիլի խորհրդանիշը կարող էր լինել սնուցող այծը (այծյամ, եղնիկ), իսկ ինքը հանդես գալ որպես գթասիրտ «պատավ» և օրորող քամի: Ընդ որում, քամին հարավային է՝ դրական Հայկական լեռնաշխարհի համար (Բելը Հայկին «բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց»),⁵⁰ և բացասական՝ տոթակեզ հարավ միջագետքյան տափարակների համար: Հեքիաթի այս պատավի առնչությունը անտառի և այնտեղ լքված նորածնի հետ, թույլ է տալիս տիպաբանական գուգահեռ անցկացնել նրա՝ որպես անտառի տիրուհու հեքիաթային ժառանգորդի, և շումերական Նինհուրսագ (Նինհուրսանգա) դիցուհու նախատիպի մեջ ևս: Ninhursag դիցանվան իմաստը «անտառապատ լեռան տիրուհի» է, բայց անվանակիր դիցուհին մշտապես կոչվում է «բուրբ աստվածների մայր», «բուրբ երեխաների մայր» և համարվել է մայրը հարավային Միջագետքի այնպիսի հոչակավոր միապետների, ինչպիսիք էին Էաննատումը, Համմուրապին, Նաբուգոդոնոստը և ուրիշներ:⁵¹ Նինհուրսագը ըմբռնվել է նաև «Մայր երկիր» և «տիեզերական լեռ»:⁵² Անշուշտ, «անտառապատ լեռան տիրուհի» կոչված և «տիեզերական լեռ» համարված Մայր դիցուհու կերպարը անտառագուրկ և տափարակ Շումերում չէր ձևավորվել: Իսկ բարձրաբերձ Պարխարը այսօր էլ Հայկական լեռնաշխարհի ամենից շատ անտառապատ մասերից է: Անտառում լքված նորածին տղաների և «անտառապատ Լեռան տիրուհու»՝ Նինհուրսագի միջև ուղղակի կապի արգասիքն է նրանց անուններում միևնույն բաղադրիչների առկայությունը:

⁴⁷ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. X, Եր., 1967, էջ 169:

⁴⁸ Афанасьева В. Нинлиль, МЗЭ, стр. 400.


⁴⁹ Նույնը:

⁵⁰ Մովսիսի Խորենցույ Պատմութիւն Հայոց, Եր., 1981, Ա, Ժբ:

⁵¹ Афанасьева В. Нинхурсаг, МЗЭ, стр. 399-401.

⁵² Ions Veronica, *The world's mythology in colour*, London, 1974, p. 10. Հմնտ. Մարագ Աժդահակ թագավորի երագում հայտնված և երեք դյուցազունների ծնած հայոց Մայր դիցուհու հետ, որ նստած էր այն լեռան ծայրին, որը «երկար յերկրէ բարձրութեամբ, որոյ զագաթնն սաստկութեամբ սառնամանեաց թուէր պատեալ. եւ ասէին զոգցես յերկրին Հայկազանց զայս լինել» (Խորենացի, Ա, իգ):

Nin-hursag դիցանվան Nin բաղադրիչը նույնական է Nin-lil դիցանվան առաջին բաղադրիչի և շումերական ուրիշ մի շարք դիցանուններում առկա Nin բաղադրիչների հետ, որոնք համապատասխան աստվածներին տրված դիցական մակդիրներ են՝ կցված բուն դիցանուններին: Ninhursag դիցանվան մեջ բուն դիցանունը *Hursag-ն է՝ «անտառապատ լեռ» նշանակությամբ: Այն կարելի է ընթերցել նաև *Horsag, որովհետև սեպագրերում u-ի o-ի համար առանձին սեպագրեր գոյություն չունենին: Այս դեպքում *Hursag/*Horsag հիմքը կարելի է նույնացնել հիշյալ հեքիաթի տարբերակներից երկուսում անտառային նորածնին տրված *Օրսագուլ* < *Օրսագ-ուլ անվան բուն շումերական (՝) ծագմամբ առաջին *Օրսագ բաղադրիչի հետ, իսկ երկրորդը համարել հայերեն *ուլ* բառը: Վերջինս նշանակում է «այծի, նաև եղնիկի, այծյամի ձագ» և հայերենի հնդեվրոպական ծագումով բառերից է:⁵³ Այս առումով ուշագրավ է, որ եթե վերոհիշյալ հեքիաթից բերված երգում երգողը՝ նորածնին հայտնաբերած պատավը, նրան «անուշ գառնուկ» է անվանում, որին «վերու էծ»-ը պիտի կաթ տա, ապա մյուս երկու տարբերակում երգ ասողը նրան ծնած մայրն է, որն իր նորածնին *Օրսագուլ* է կոչում, որին ջեյրանը, պախրան պիտի սնեն: Ահա և այս տարբերակները.



1. «Նանա՛, նանա՛ Օրսագուլ,
Պախրեն կգա ծիծ կտա,
Ջիգար չունենա՛ քիչ կտա,
Քամին կգա ժած կտա»:⁵⁴

2. «Նանի՛ կ, նանի՛ կ Օրսագու՛ լ,
Օրդ թամամ, Օրսագու՛ լ...
Ջեյրանը քեզ ծիծ կտա,
Քամին կգա, կօրորա»:⁵⁵

Ուշագրավ է, որ շումերական Լագաշի պեղումներից հայտնաբերված և Նինուրսագ դիցուհուն վերագրված կուռքի (տե՛ս նկարը) որովայնի ստորին մասին այժ է պատկերված, իսկ նրանից վերև՝ դեպի կուռքի կուժքը, պատկերված է շատ ավելի փոքր և հստակ չգծագրված մի կենդանական ֆիգուր, հավանաբար, այծի ձագը:⁵⁶ Ընդ որում, այծապատկերը նման է Հայաստանի ժայռապատկերների այծապատկերներին, իսկ այս կուռքի նման կուռքեր հայտնաբերվել են Թել-Բրաքի, Ուրի, Մարիի, Թել-

⁵³ ՀՄԲ, հ. III, էջ 591:

⁵⁴ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VIII, Եր., 1977, էջ 398:

⁵⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II, Եր., 1959, էջ 460:

⁵⁶ Mallowan M.E., *L'aurore de la Mésopotamie et de l'Iran. Éditions sequoia, Paris-Bruxelles, 1966, p. 48, fig. 39; "Le berceau de l'humanité. Les grandes étapes de l'humanité", Genève, 1976, p. 84.*

լոյի պեղումներից:⁵⁷ Վերջինս պատրաստված է լուսնակուճից և թվագրվում է մ.թ.ա. մոտ 3300 թվականով:⁵⁸

Ուշագրավ է մեկ ուրիշ հանգամանք ևս: Հեքիաթի նորածնին կճղակավոր եղջերավոր կենդանիների կողմից կերակրելու դրվագը կա նաև ուրիշ հեքիաթներում, բայց միայն մեր բերած հեքիաթում է, որ դրվագը բերվում է նրան ձուլված երգի հետ միասին: Ի դեպ, այս դրվագի՝ ժամանակին ունեցած տարածվածության մասին կարելի է դատել մեր բերած երեք տարբերակների միջոցով, որովհետև դրանք գրի են առնվել իրարից բավականին հեռու գտնվող այնպիսի շրջաններում, ինչպիսիք են Վանա լճի ավազանը (Բաղնոցի Բարդավ գյուղ), Լոռին (Աթան գյուղ) և Վաղարշապատը:⁵⁹

Անտարակույս, Բարձր Հայքի հնագույն գաղթականները, որոնք Շումեր էին հասցրել kur «լեռ, լեռնային երկիր» բառը և Էնլիլի լեռնային նախատիպի պաշտամունքը, իրենք այնտեղ հայտնվել էին Արևմտյան Եփրատի, ապա և՛ Մեծ Եփրատի հոսանքին զուգահեռ ընթացող ճանապարհով: Նույն կերպ, բայց գետի հոսանքին հակառակ ուղղությամբ ավելի ուշ Շումերի բնակիչներն էին հասել Հայկական լեռնաշխարհ, վերջինիս բնակիչներին հայտնի դարձնելով ծանոթ դիցուհու *Hursag/*Horsag անունը՝ պահպանված հայկական հեքիաթների *Օրսագույլի* անվան մեջ: Արևմտյան և Արևելյան Եփրատների միախառնման վայրից հարավ գտնվող Կապան (այժմ՝ Քերանի) շրջանի հնագիտական պեղումների միջոցով պարզվել է, որ այստեղ գոյություն է ունեցել շումերական Ուրուկ-IV մշակույթը (մ.թ.ա. 3500-3100թթ.) կրողների գաղթավայր: Ըստ Ջ. Մելլարտի՝ նրանք Եփրատով ու Եփրատամերձ ճանապարհով էին այստեղ հայտնվել:⁶⁰ Իսկ դա պայմանավորված է եղել Արկնիում (Արդանա-Մադեն) և շրջակայքում պղնձի և արծաթի հանքերի գոյությամբ:⁶¹

Անշուշտ, շումերներին հետաքրքրել են նաև ամուր բնափայտով Հայկական Տավրոսի երկնասլաց ծառերը, որոնք անփոխարինելի շինանյութ էին նավաշինության, տաճարաշինության և պալատաշինության մեջ: Եփրատյան ճանապարհի առավելությունն այս դեպքում ևս ակնհայտ էր: Ինչպես Հ. Քլենգելն է նշում. «Այս ճանապարհը հարմար էր մանավանդ էջերի քարավանը ջրով մատակարարելու տեսանկյունից:⁶² Մենք դեռևս տվյալներ չունենք մ.թ.ա. երրորդ հազարամյակում Միդիական տափաստանը հատող և Թադմոր Պալմիրայով անցնող

⁵⁷ Mallowan M., նշվ. աշխ., էջ 47, նկ. 37, 38 և էջ 135; “Le berceau de l’humanité”, էջ 89.

⁵⁸ Homès-Fredericq D., La religion en Mésopotamie de Sumer à Babylone, “De Sumer à Babylone. Collections du Louvre”, p. 68, fig. 20.

⁵⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II, էջ 618, հ. VIII, էջ 850, հ. X, էջ 570:

⁶⁰ Меллаарт Дж., Торговля и торговые пути между северной Сирией и Анатолией (4000-1500гг. до н.э.), “Древняя Эбла” (Раскопки в Сирии), М., 1985, стр. 23:

⁶¹ Նույն տեղում, էջ 24:

⁶² Էջերի քարավաններն ի վիճակի չէին հատելու անջրդի Միդիական տափաստանը՝ ի տարբերություն ուղտերի քարավանների, բայց սրանք Մերձավոր Արևելքում հայտնվեցին միայն մ.թ.ա. XIV-XIII դդ. սկսած՝ շնորհիվ արամեական ցեղերի Արաբիայից կատարած գաղթերի:

ճանապարհի օգտագործման մասին»:⁶³ Իսկ Շումերին հարևան Սիրիական տափաստանը ուղղակի *անապատ* էր կոչվում⁶⁴:

Վերոշարադրյալը, բխելով հայկական և միջագետքյան առասպելաբանական նյութի տիպաբանական և լեզվաբանական վերլուծություններից, մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ շումերաքաղական առասպելաբանության առանձին կերպարների և նրանց հարակից նյութի խորքային շերտերի բացահայտումն ու իմաստավորումն անհնար է մինչև վերջ իրագործել՝ առանց հաշվի առնելու հասկացությունների այն զուգորդումներն ու համադրումները, որոնք ծնվել են Հայկական լեռնաշխարհում, հնդեվրոպական ընդհանուր առաջնություն և արտացոլվել հայկական առասպելաբանաստեղծական պատկերացումներում և հայոց լեզվում⁶⁵:

КОЛЫБЕЛЬ ИНДОЕВРОПЕЙСКОГО И ШУМЕРСКОГО БОГА ВЕТРА

___ Резюме ___

___ С. Петросян ___

Анализ образов древней месопотамской мифологии показывает, что она состоит из трех компонентов с различными элементами. Наряду с исконно шумерским и аккадским компонентами, там наличествует также индоевропейский компонент. Такое заключение основывается на фактах, наиболее яркими из которых являются следующие: 1. Шумерское слово *kur* “гора, горная страна” фонетически близка с и.-е. *Hkʷog- “гора” > др. греч. *Βορέας*, восточнослав. Гора, Го́ра, Горыч – названия северного ветра. 2. Главный бог Шумера Энлиль/“Владыка-ветер” живет на высокой горе, его эпитет *Kur.gal* “Высокая гора”, а главный храм Энлиля в Ниппуре носил название *E.kutr* “дом горы”. 3. Индоевропейский компонент наличествует в именах *Enlil* (“Владыка-ветер”) и *Ninlil* (“Госпожа ветер”). Ср. и.-е. *lel-/el-* “трясти, шевелить”, “шатать, качать”. 4. Элиля сравнивают не только с горой и с ревушим ветром, но и с диким быком. Ср. названия Восточно-понтийского хребта (на северо-востоке Армянского нагорья) и северного ветра у древних армян-Пархар, Пархарци с арм. *пахра* “косуля”, “крупный рогатый скот”. 5. Там же, по поверьям древних греков находилась страна амазонок Фемискира (на реке Фермодонт). А амазонки – дочери древнегреческого бога войны и ветра Ареса. 6. Шумеры урукского периода ориентировались на поставки из Армянского нагорья, так как торговый путь вверх по Ефрату приводил их к месторождениям как меди и серебра, так и к богатым лесам Армянского Тавра. Именно там, в районе Кебана, были найдены материалы шумерской культуры Урук-IV (3500-3100 гг. до н. э.). 7. Шумерская колонизация этого района дала шумерийцам возможность вступить не только в торговые, но и в культурные взаимоотношения с индоевропейскими предками армян.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Մարգիս Գարեգինի - պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Մ. Նալբանդյանի անվ. ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն, E-mail: Vahe1996@mail.ru

⁶³ Кленгель Х., *Архивы Эблы и история Сирии: Проблемы и перспективы*, “Древняя Эбла”, стр. 208.

⁶⁴ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 114:

⁶⁵ Դեռևս տասնամյակներ առաջ խորհրդային հայտնի պատմաբան և ազգագրագետ Ս. Տոկարևը ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ *Անու* (*Ան*), *Էա* (*Հայա*, *Էնկի*) և *Էնլիլ* ամենահարգի աստվածների «կերպարների ծագումը պարզ չէ, համենայն դեպս, դրանք բարդ են» (Տոկարև Ս., նշվ. աշխ., էջ 322):